ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ.

1913 թ. Մարտի 4-ին ստանձնել եմ Մատենադարանապետի պաշտօնը. այդ օրից մինչև տարեւոյս Մարտի 1-ը ստացել եմ նոր ձեռագրեր 34 հատ, որոնք արձանագրուած են ցուցակում 4601—4634. ըստ այսմ.

4601. Աւետարան, Բաղչիսարայում 1639 թուին գրուած, Տիրայր վարդապետի ձեռքով և Բիշնևի կոնսիստորիայի միջոցով.

4602. Շարական, սկզբից և վերջից թերի, փոքրադիր.

4603. Խորհրդածութիւն Մոնդեսքիոյի ի վերայ պատճառաց մեծութեան և նուազման Հռովմայեցւոց. թարգ. Յ. Գ. Մըրմռեանց. նուէր թարգմանչից.

4604. Պատմ.— և Աստուածաբանական քննութիւն կանոնի Ս. Գրոց. յօրինեալ ի Պրուսացի Յովհաննէսէ Տէրոյեանց Զամուռճեան. նուէր Յ. Գ. Մրմռեանցի.

4605. Մեկնութիւն հինգ գրոցն Մովսէսի. թարգ. ի լատիներէնէ հրամանաւ Յովհաննէս կոլոտ կոչեցեալ պատրիարքի, ի Ղուկաս վարդապետէ Խարբերդցւոյ, և համառօտեալ ի Պօղոս վարդապետէ Ադրիանուպոլսեցւոյ. թերի: նուէր Յ. Գ. Մրմռեանցի.

4606. Սաղմոս Դաւթի. մաղաղաթ. նուէր Երևանցի վաճառական Առաքել աղա Ամիրիկեանցի.

4607. Բժշկարան.— բժշկական բառարան հայերէն, հոռոմերէն, ֆրանսերէն, արաբերէն, պարսկերէն. բժշկարան և հեքիմարան ճարտարութեան . . . : նուէր Լեոն Ռոստոմեան Ղորղանեանի:

4608. Մաշտոց փոքրադիր. նուէր Փամբակի Փամբ գիւղի Պօղոս քահանայ Տէր Յովհաննէսեանի.

4609. Աւետարան. նուէր նոյն քահանայի.

4610. Խորհրդատետր.

4611. Բանք Ոսկիականք և գեղեցագոյնք. զանազան ս. Գրոց վարդապետութեամբն յարդարեալ և ճոխացուցեալ. Բիստեցի Յովհաննէս քնյ. Տէր Գրիգորեանի նուէր.

4612. Հաւաքածոյ կրօնական մեկնարանական: Կարմիր վանքից բերուած.

3613. Մաշտոց. Կարմիր վանքից բերուած.

4614. Ճաշու աւետարան յինանց. Կարմիր վանքից բերուած.

4615. Աւետարան. կարմիր վանքից բերուած.
4616. Մաշտոց.
4617. Մեկնութիւն Տումարի, զոր արար Յակովբ վարդապետ Դրիմեցի. նուէր ալէքսանդրապոլցի Դաւիթ Տալիթեանի.
4618. Հաւաքածոյ ս. Հարց, կրօնական, տօմարական պատմական հայկն, գրութիւններից.
4619. Մաշտոց.
4620. Շարական. գնուած պ. Հայկ Դաղեանի միջոցաւ Թէջրլու գիւղացուց.
4621. Ռամ-վիճակացոյց, տոմար.
4622. Տօնացոյց, մանր ուսմունք ժամագրոց. նուէր Երևանի ս. Զօրաւոր եկեղեցու միաբան Վրթանէս քահանայ Մարգարեանից.
4623. Թուղթ Արիստոտէլի փիլիսոփային յաղագս կազմութեան տիեզերաց. ի ֆրանսերէն թարգմանութեանց Պաթէօյի և Պարթէլըմի Սէն-դ-Իլէրի թարգ. Յարութիւն—Գարեգին Գ. Մրմռեանց. նուէր հայ թարգմանչից.
4624. Աւետարան. Գարեգին վարդապետի ձեռամբ նուէր Տիկին Եկատարինէ Մելքումեանից։

—Հայրապետական դիւանի № 313 գրութեամբ ստացուած Հանգ. փոխ-գնդապետ Ռոստոմ-բէկ Մադաթեանի նուէր

4625. ա. Ուրբաթագիրք հայոց Ռ.Ճ.Հ. թուականին գրուած
4626. բ. Տեառն Ներսեսի, ի վերայ տանց տառից նիրրողական. և հաւաքածու.
4627. գ. Շարական. չունի յիշատակարան.
4628. դ. Մաշտոց. չունի յիշատակարան.
4629. ե. Տօնացոյց Հայոց Ռ.Ճ.Է թուին գրուած.
4630. զ. Հաւաքածու պատմութեան Սուրբ Հարց, ևն.
4631. է. Կանոնագիրք. գրուած Հայոց Ռ.Ղ.Ը. թուին.
4632. ը. Շարական Մագաղաթ. թերի. չունի յիշատակարան.
4633. թ. Մեկնութիւն սաղմոսի, քարոզներ։ թերի.
4634. ժ. Տօնացոյց և Մանր ուսմունք ժամագրոց. թերի սկզբից. գրուած Հայոց Ռ.Ճ.Կ.Թ թուին։

Յայտնում եմ խորին շնորհակալութիւն նուիրատուներին և ձեռագիր հայթայթողներին։

Մայր Աթոռի Մատենադարանապետ՝

Յուսիկ Արքեպս.